ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԱԽԱՐԱՐ
Ռ. ՊԵՏՐՈՍՅԱՆ

«14» 09 2020թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ 000071

Ձեռնարկողը՝ *«Հիդրոգեոշին» ՍՊԸ*
ք. Գորիս, Վանքի Տափ 4/25

Գործունեությունը՝ ***Գորիսի բազալտների հանքավայրի օգտակար հանածոյի արդյունահանման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն***
Սյունիքի մարզ

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի պաշտոնակատար՝ Ա. Թարգյան

Առդիր եզրակացությունը՝ 5 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ
ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

թիվ ԲՓ 000071

<14> 09 2020թ.

Սյունիքի մարզի Գորիսի բազալտների հանքավայրի օգտակար հանածոյի արդյունահանման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն

Ներածական մաս

Ձեռնարկող՝	«Հիդրոգեոշին» ՍՊԸ
Փաստաթղթի տեսակը՝	Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն /ՇՄԱԳ/, նախագծային փաստաթուղթ
Գործունեության տեսակը՝	«Ա» կատեգորիա
Տեղադրման վայրը՝	Սյունիքի մարզ, Տաթև համայնք, բն. Շինուհայր

Համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի, 4-րդ մասի, 2)-րդ կետի գ. ենթակետի՝ Գորիսի բազալտների հանքավայրի արդյունահանումը դասակարգվում է «Ա» կատեգորիայի գործունեության տեսակների ցանկում:

Գորիսի բազալտի հանքավայրը գտնվում է ՀՀ Սյունիքի մարզում, Տաթև համայնքի Շինուհայր գյուղի վարչական սահմանում, համանուն գյուղից 6,6 կմ հյուսիս-արևմուտք, Վայք-Գորիս ավտոճանապարհի ձախակողմյան մասում՝ վերջինից 1.2 կմ հեռավորության վրա: «Հիդրոգեոշին» ՍՊ ընկերության կողմից /այսուհետ՝ Ընկերություն/ նախագծված բացահանքը զբաղեցնում է 5.33 հա մակերես, որի հողատեսքի նպատակային նշանակությունը գյուղատնտեսական է, գործառնական նշանակությունը՝ արոտավայր: Արդյունահանման թույլտվություն ստանալուց հետո հողի նպատակային նշանակությունը սահմանված կարգով կփոխվի:

Հանքավայրի տարածքը գտնվում է 1800-2000մ բացարձակ բարձրությունների վրա: Տեղամասի կենտրոնի աշխարհագրական կոորդինատներն են՝ հյուսիսային լայնության – 39° 29′ 21.95″, արևելյան երկայնության - 46° 15′ 50.77″: Նախագծված տեղամասի կոորդինատները ARM WGS-84 համակարգով հետևյալն են՝

1. 8608794.3 4373599.2	2. 8608554.4 4373657.5
3. 8608601.0 4373738.3	4. 8608665.5 4373804.9
5. 8608748.6 4373840.7	6. 8608970.0 4373642.9
7. 8608923.4 4373624.3	8. 8608874.7 4373638.1
9. 8608810.2 4373628.5	

Սյունիքի մարզի Գորիսի բազալտների հանքավայրի պաշարները հաստատվել են ԽՍՀՄ ՊՊՀ-ի 27.01.1989թ.-ի N 299 արձանագրությամբ, 1988թվականի հունվարի 1-ի դրությամբ, ըստ A, B և C_1 կարգերի և համապատասխանաբար կազմում են՝ 487,4հազ.մ^3, 655,2 հազ.մ^3 և 1455,2հազ.մ^3 /ընդհանուր՝ A+B + C_1-2597,8հազ.մ^3/: Բլոկի ելքը լեռնային ապարներից կազմում է 30.0%:

Ընկերության կողմից նախագծված բացահանքի 5.33հա տարածքում հաշվեկշռային պաշարների ծավալը կազմում է 307.75հազ.մ^3 բազալտի զանգված և 100.2հազմ^3 մակաբացման ապարներ: Բացահանքի տարեկան արտադրողականությունը հաշվարկված է՝ 6155մ^3 մարվող և 5810մ^3 բազալտի արդյունահանվող պաշար: Հանքավայրը ծածկող ապարները /1.85մ միջին հզորությամբ/ ներկայացված են ժամանակակից առաջացումներով /ալյուվիալ-դելյուվիալ նստվածքներ՝ ներկայացված անդեզիտաբազալտների կտորներով և քարաբեկորներով/ և հողաբուսական շերտով: Մակաբացման ապարները ավտոինքնաթափով և բուլդոզերով տեղափոխվում են բացահանքի հարավային մասում ձևավորվող լցակույտեր, որտեղ առանձին պահեստավորվում են N1 և N2 լցակույտերում: Հողաբուսական շերտը հանդիպում է տեղ-տեղ, հզորությունը բացահանքի տարածքում կազմում է 0.3մ, ծավալը՝ 16250մ^3:

Ելնելով հանքավայի լեռնաերկրաբանական, լեռնատեխնիկական պայմաններից և օգտակար հանածոյի շերտի տեղադրման պարամետրերից և տեղամասի մշակումը նախատեսվում է բաց լեռնային աշխատանքներով: Նախագծված բացահանքը բնութագրվում է հետևյալ պարամետրերով.

- ամենամեծ երկարություն– 315մ;
- ամենամեծ լայնություն– 264մ;
- ամենամեծ խորություն – 6.6մ;
- բացահանքի օտարման տարածք–5.33հա:

Հանքավայրի մշակման համար ընտրված է ընդլայնական մեկ կողանի մշակման համակարգ: Հորիզոնի մշակումը կատարվելու է համատարած ձևով, կիրառելով հիմնականում հորատասեպային եղանակը, հորատման համար կիրառելով ՊՊ-50ԲԵ մակնիշի հորատման մուրճ: Բլոկների (մեծ աղյուսների) արդյունահանումը իրականացվում է հորատասեպային եղանակով, խիստ անհրաժեշտության դեպքում կկատարվի հորատապայթեցման աշխատանքներ՝ պայթանցքային լիցքերի կիրառմամբ՝ աշխատանքները համաձայնացնելով ոլորտում իրավասու լիազոր մարմնի հետ:

Հանքավայրի մշակման համար ընտրված է ընդլայնական մեկ կողանի մշակման համակարգ, որի տարրերն են ՝

- Հանքաստիճանի բարձրություն՝ 2.5 մ;
- Անվտանգության բերմայի լայնություն՝ 1.0 մ;
- Աշխատանքային հանքաստիճանի թեքման անկյուն՝ 90^0;
- Աշխատանքային հրապարակի ամենափոքր լայնություն՝ 18-20 մ:

Հանքավայրի բացումը կատարվում է հանքավայրի հյուսիս-արևելյան՝ 1810.0մ և 1770.0մ բարձրության հորիզոններից: Աշխատանքները ներառում են՝ ավտոճանապարհի կառուցում հանքավայրի հարավ-արևելյան կողմից /1758.0մ բարձրության նիշից մինչև բացահանքի 1810.0մ բարձրության հորիզոն/: Ճանապարհն ունի 515մ երկարություն /որից 415մ-ը արտաքին բացահանքի սահմաններից դուրս է/ 6մ լայնություն, 100.97‰ թեքություն: է Ավտոճանապարհը աստիճանաբար կտրտվելով կսպասարկի հաջորդ հորիզոնները: Ավտոճանապարհների անցումը՝ մակաբացման ապարների հավաքումը կուտակումը կատարվում է S-170 բուլդոզերի օգնությամբ:

1767.5մ և 1770.0մ բարձրության հորիզոնները կմշակվեն կտրող ներքին կիսախրամով, որի երկարությունն է 53մ, թեքությունը՝ 94.3‰: Բացող խրամների անցկացումը կատարվում է բուլդոզեր-էքսկավատոր լեռնային համալիրի միջոցով:

Բլոկների բարձման համար ընդունված է ամբարձիչ, իսկ արտադրական թափոնների և մակաբացման ապարների համար՝ միաշերեփ էքսկավատոր: Մակաբացման ապարների քանակը, որի ծավալը հայցվող տարածքում կազմում է 100 200մ^3, ավտոինքնաթափով և բուլդոզերով կտեղափոխեն բացահանքի հարավային մասում ձևավորվող ժամանակավոր ներքին լցակույտեր /հողաբուսական շերտի N1 լցակույտ և ալյուվիալ դելյուվիալ առաջացումների և հողմահարված ջարդոտված բազալտների շերտի N2 լցակույտ/: Զբաղեցրած մակերեսները համապատասխանաբար կազմում են՝ N1-լցակույտ 1870մ^2, N2լցակույտ-4730մ^2 մակերես: Տեղափոխման հեռավորությունը միջինը 0.5կմ է, արտադրողականությունը՝ 800 մ^3/հերթ: Հանույթից և բլոկների կոպտամշակումից առաջացած արտադրական թափոնները ժամանակավոր կկուտակվեն N3 լցակույտ, մինչև սպառողի կողմից իրացումը:

Կուտակված արտադրական թափոնների, մակաբացման ապարների բարձումը ավտոինքնաթափերի մեջ կատարվում է միաշերեփ էքսկավատորով: 1 հատ էքսկավատորը բավարար է քարհանքի արտադրական թափոնների՝ (15.65մ^3/հերթ), մակաբացման ապարների՝ 4.71մ^3/հերթ բարձման աշխատանքների համար (3.0մ^3/հերթ-ը կտեղափոխվի բուլդոզերով): Շահագործման ընթացքում հնարավորություն ստեղծվելուց հետո /հանքաստիճանը կամ նրա մի մասը մինչև հատակը շահագործվելու դեպքերում/ շահագործմանը զուգընթաց հարևան հորիզոնների մակաբացման ապարները անհրաժեշտ քանակությամբ՝ 1.9մ բարձրությամբ կլցվեն բացված հատակի վրա (1810մ, 1770.0մ,.. բարձրության) և կհարթեցվեն՝ ստեղծելով ներքին լցակույտաառաջացում:

Բացահանքի արտադրական հրապարակում նախատեսվում է բեռնարկղային տիպի տնակներ, որոնք պետք է կահավորված լինեն սանիտարա-կենցաղային պայմաններով, ներառյալ՝ կենցաղային կեղտաջրերի անջրթափանց հոր:

Բացահանքի մատակարարումը տեխնիկական ջրով կիրականացվի ջրատար մեքենայով: Ջուրը նախատեսված է հորատման, փոշենստեցման աշխատանքների, ինչպես նաև աշխատանքային հրապարակների, ճանապարհների և լցակույտերի ջրման նպատակով: Խմելու ջուրը բացահանք կբերվի ջրի ցիստեռնով: Բացահանքում 14 աշխատողների համար ջրածախսը կկազմի 83.98մ^3/տարի, միջին օրեկանը՝ 0.323մ^3: Խմելու և տեխնիկական ջուրը բացահանք կբերվի Գորիս քաղաքից կնքվելիք ջրօգտագործման պայմանագրերի համաձայն:

Բացահանքում ջրհեռացնող կառուցվածքներ չեն նախատեսվում, լեռնային աշխատանքների տեխնոլոգիայով արտահոսքեր չեն նախատեսվում: Տարածքում բացակայում են բաց ջրավազանները և գրունտային ջրերը, իսկ անմիջապես բացահանքի տարածք թափվող անձրևային ջրերը կհեռացվեն ինքնահոս կերպով՝ ներծծվելով ճաքերով:

Բազալտների արդյունահանման աշխատանքների ընթացքում փոշու և վնասակար ծխագազերի արտանետումները կապված կլինեն՝ քարի արդյունահանման, լցակույտի ձևավորման, տեխնիկական միջոցների շարժման հետ: Իրականացվել են մթնոլորտի մերձգետնյա շերտերում վնասակար արտանետումների ցրման հաշվարկներ և համաձայն արդյունքների՝ արտանետումների սպասվող գետնամերձ կոնցենտրացիաների քանակները գտնվում են բնակավայրի համար սահմանված թույլատրելի նորմերի սահմաններում: Քանի որ մոտակա բնակավայրը

գտնվում է 6.5 կմ հեռավորության վրա, ուստի հատուկ միջոցառումներ չեն նախատեսվում սանիտարա-պաշտպանիչ գոտու ապահովման համար:

Հանքավայրի շահագործման ընթացքում շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցությունները կանխարգելող միջոցառումները ներառում են հետևյալները.

- արքավորումների տեխնիկական վիճակի նախնական և պարբերական ստուգումներ, կատալիտիկ զտիչների տեղադրում արտանետման խողովակների վրա:
- տարածքի և ճանապարհների ջրցան տարվա չոր եղանակային օրերին
- նավթամթերքների պահում բացահանքի արտադրական հրապարակում հատկացված տեղում /բացօթյա կամ ծածկի տակ պահեստ/, որի հատակը բետոնապատվում է

Բացահանքի շահագործման ընթացքում առաջանում են բնապահպանական տեսանկյունից տարբեր վտանգավորության թափոններ, որոնցից են՝ մեխանիզմներում փոխվող հնացած յուղերը և քսայուղերը, մետաղական թափոնները, անվադողերը, կենցաղային աղբը: Նշված թափոնների մի մասը /օգտագործված յուղեր, քսայուղեր, անվադողեր/ կհանձնվեն երկրորդական վերամշակման լիցենզիա ունեցող կազմակերպութուններին/, իսկ կենցաղային աղբը կտեղափոխվի մոտակա աղբահավաք կետ:

Հողային ռեսուրսների պահպանման միջոցառում է հանդիսանում խախտված տարածքների ռեկուլտիվացիան/վերականգնումը: Բացահանքի լեռնատեխնիկական վերականգնումն իրականացվելու է բացահանքի շահագործման 17-րդ տարվանից սկսած՝ արդյունահանման աշխատանքներին զուգահեռ: Արդյունահանման աշխատանքների ավարտից հետո լցակույտում մնացած ապարների 2500մ^3 ծավալը կտեղափոխվի 1780.0մ բարձրության հանքաստիճանների վրա, կլցվի 1.9մ բարձրությամբ և S- 170 բուլդոզերի օգնությամբ կհարթեցվի: Հարթեցումը կկատարվի ընդհանուր 64150մ^2 մակերեսում, ներառելով բացահանքի /հատակի/ մակերեսը, արտադրական հրապարակը, ավտոճանապարհները, նախկինում տեղադրված լցակույտի մակերեսը: Լեռնատեխնիկական վերականգնման տևողությունը կկազմի 21 օր, իսկ աշխատանքների իրականացման ծախսերի խոշորացված նախահաշիվը գնահատվել է 1514.8 հազ.դրամ: Տեխնիկական ռեկուլտիվացումից հետո կատարում են կենսաբանական ռեկուլտիվացիա ողջ տարածքի վրա՝ կիրառելով հիդրոցանքի եղանակը /որի ծախսերը գնահատվել է 1.283000 ՀՀ դրամ/: Ռեկուլտիվացման ծախսերը ընդհանուր կկազմեն՝ 2797.8հազ ՀՀ դրամ/:

Գորիսի բազալտի հանքավայրի շահագործման ընթացքում շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցությունը կանխարգելելու և մեղմելու նպատակով մշակվել են միջոցառումների ծրագիր ուղղված՝ մթնոլորտային օդի, հողային, ջրային ռեսուրսների, կենսաբազմազանության պահպանությանը: Նախատեսվել են նաև միջոցառումներ, ուղղված՝ աշխատանքային միջավայրում աշխատողների անվտանգությանը, արտակարգ իրավիճակների արձագանքմանը, տարբեր տեսակի թափոնների կառավարմանը, հնարավոր սոցիալական ազդեցությունների մեղմմանն ու կանխարգելմանը: Բոլոր միջոցառումներն իրենց գործողություններով ամփոփվել են բնապահպանական կառավարման և մոնիթորինգի պլաններում:

Ընկերության կողմից, արդյունահանմանը զուգընթաց իրականացվելու է շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելմանն և մեղմացմանն ուղղված մշտադիտարկումներ, որոնք ներառվել են բնապահպանական մշտադիտարկումների պլանում և որպես օբյեկտներ դիտարկվել են՝ մթնոլորտային

օդը, հողային ծածկույթը, կենսաբանական միջավայրը: Մշտադիտարկումների իրականացման տարեկան ծախսերը գնահատվել են 150.0 հազ ՀՀ դրամ:

Բուն հանքավայրի տարածքը ներառված չէ բնության հատուկ պահպանվող տարածքի սահմաններում: Գործունեության տարածքում պահպանության կարիք ունեցող, ՀՀ բույսերի և կենդանիների Կարմիր գրքում կամ ԲՊՄՄ կարմիր ցուցակում գրանցված բուսատեսակները, կենդանատեսակները, ինչպես նաև կենդանիների ցամաքային միգրացիոն ուղիները բացակայում են, համաձայն ՇՄԱԳ հաշվետվության տեղեկատվության:

Եզրափակիչ մաս: Նախատեսվող գործունեության ՇՄԱԳ հաշվետվության փորձաքննությունն իրականացվել է <<Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին>> ՀՀ օրենքի պահանջներով: Գնահատման և փորձաքննության փուլերում գործունեության իրականացման վերաբերյալ Սյունիքի մարզի Շինուհայր բնակավայրում անցկացվել են հանրային քննարկումներ /չորս քննարկում/: Փորձաքննական գործընթացին մասնակցել են պետական և տեղական ինքնակառավարման մարմիններ, շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումներ, առողջապահության նախարարությունը, Սյունիքի մարզպետարանը, որոնց կողմից ներկայացված կարծիքները ևս հաշվի են առնվել փորձաքննության գործընթացում: ՇՄԱԳ հաշվետվությունում ներկայացված բնապահպանական միջոցառումների և մոնիթորինգի գործողությունների իրականացման դեպքում, գործունեության իրականացման ընթացքում աղտոտվածությունը օդային և ջրային ավազանների, հողային ռեսուրսների ինչպես նաև կենսաբազմազանության վրա կգտնվի թույլատրելի նորմերի սահմաններում:

Փորձաքննական պահանջներ

1. Հանքարդյունահանման աշխատանքների իրականացման ընթացքում անհրաժեշտ է առաջնորդվել 22 փետրվարի 2018թ. N 191-Ն որոշման պահանջներով՝ շրջակա միջավայրի բաղադրիչների /մթնոլորտային օդ, հողային ծածկույթ, կենսաբազմազանություն/ մշտադիտարկումների արդյունքների տարեկան հաշվետվությունը՝ նշված որոշմամբ սահմանված ժամկետներում և ձևաչափով ներկայացնել լիազոր մարմին:
2. Գործունեության իրականացման ընթացքում անհրաժեշտ է ապահովել և պահպանել բնապահպանական կառավարման պլանում և մշտադիտարկման ծրագրում նախատեսված միջոցառումների իրականացումը և ժամանակացույցերը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Հիդրոգեոշին» ՍՊ ընկերության կողմից ներկայացված Սյունիքի մարզի Գորիսի բազալտների հանքավայրի օգտակար հանածոյի արդյունահանման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության վերաբերյալ տրվում է դրական եզրակացություն՝ վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

Փոխտնօրեն՝ Գ. Գևորգյան

Գլխ. մասնագետ՝ Հ. Մկրտչյան